


LITURGICAL LIFE ԾԻՍԱԿԱՆ ԿԵԱՆՔ



SERVICE FOR THE REPOSE OF SOULS (Hokehankisd)

ne of the most cherished traditions in the Eastern Orthodox Church is remembering the dead and praying for them. In addition to the Funeral Service the Tradition of the Church provides comfort to the living by praying for the souls of the departed. 2 Maccabees 12:45 affirms that it is "a holy and pious thought" to pray "for those who have fallen asleep in godliness."

Praying for the dead is rooted in the Orthodox doctrine that the soul is eternal and at death, when the soul is separated from the body, the soul moves to the life hereafter and awaits for the fulfillment of Christ's promise to come again and raise the dead on the day of judgement. The Orthodox Church teaches that we live in time between the first and second coming of Christ, a time which the Fathers of the Church have described as a time of mercy. Since the dead await for the day of judgement, we pray that God will have mercy on them.

In the Divine Liturgy, in the diptychs, the priest prays: "Remember, O Lord, and have mercy and compassion on the souls of those who are in their eternal rest; give them rest with your saints in your kingdom of heaven, and make them worthy of your mercy." He then prays by name for those for whom special prayers have been requested.

St. John Chrysostom, one of the most revered Fathers of the Church says: "It is not in vain that we have received this tradition from the Apostles, that we pray for the dead during the revered and inspiring mysteries." According to the Book of Rituals, prayers for the dead are offered for three days after burial in remembrance of Christ's own burial for three days and his resurrection. Memorial prayers are offered on the seventh day, i.e. on Saturdays at Vespers which is the beginning of Sunday, the day of the Resurrection of the Lord. Memorial prayers are also offered on the 40th day in accordance with the people of the Old Testament who mourned for 40 days after Moses' death, and on the anniversary of the death or at any time the family wishes to pray for the soul of a departed loved one.

209t2UU9hUS

Ա րեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու մեջ ամենէն հին աւանդութիւններէն մին է յիշել մեռելները եւ աղօթել անոնց համար։ Յուղարկաւորութեան Կարգէն զատ Եկեղեցւոյ Աւանդութիւնը ողջ մնացողներուն մխիթարութիւն կր ջամբէ հանգուցեալներու հոգիներուն համար աղօթելով։ Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ այս աւանդութիւնը կր պահուի Հոգեհանգիստի արարողութեան մէջ։ Բ. Մակարայեցւոց ԺԲ. 45 կր հաստատէ թէ «գեղեցիկ ևւ շնորհայի արարք մրն է» աղօթել «ևւ յիշել ննջեցեալները

անոնց մեղքերու թողութեան համար։»

Ննջեցեալներու համար աղօթելը հիմնուած է Ուղղափառ Եկեղեցւոյ վարդապետութեան վրայ թէ հոգին անմահ է եւ թէ մահուամբ, երբ հոգին կը բաժնուի մարմինէն, հոգին կ'անցնի հանդերձեալ կեանքի եւ կը սպասէ Քրիստոսի խոստումին լրումին թէ ինք դարձևալ պիտի գայ եւ մեռելները պիտի յարութիւն առնեն դատաստանին օրը։ Ուղղափառ Եկեղեցին կ'ուսուցանէ թէ մենք այժմ կ'ապրինք Քրիստոսի առաջին եւ երկրորդ գալստեան ժամանակաշրջանին միջեւ, զոր մեր հայրերը կր նկարագրեն որպէս ժամանակ ողորմութեան։ Եւ որովհետեւ մեռելները կը սպասեն դատաստանի օրուան, մենք կ'աղօթենք որ Աստուած ողորմի անոնց հոգիներուն։

Ս. Պատարագի ընթացքին, յիշատակութիւններուն մէջ, քահանան կ'աղօթ է այսպես. «Յիշէ, ով Տէր, եւ ողորմէ, եւ գթա հանգուցեալներու հոգիներուն հանգիստ տուր անոնց, լուսաւորէ զիրենք եւ դասաւորէ քու սուրբերուդ կարգին երկնքի արքայութեանդ մէջ, եւ արժանի ըրէ զանոնք քու ողորմութեանդ։» Ապա կը յիշէ անունները անոնց որոնց

համար մասնաւոր խնդրանք մատուցուած է։

Ս. Յովհան Ոսկերերան, Եկեղեցւոյ ամենասիրուած սուրբերեն մին, կ'րսե. «Ի զուր չէ որ մենք այս աւանդութիւնը ստացած ենք Առաքեալներէն, աղօթելու մեռելներուն համար սուրբ եւ անմահ Խորհուրդին ընթացքին։» Ըստ Հայ Եկեղեցւոյ Ծիսարանին, մեռելներու համար աղօթք կը մատուցենք թաղումէն ետք երեք օրեր շարունակ ի յիշատակ Քրիստոսի երեքօրեայ թաղման եւ յարութեան։ Յիշատակութեան աղօթքներ կր մատուցուին նաեւ մահուրնէ ետք եօթներորդ օրը, այսինքն Կիրակամուտքի Ժամերգութեան՝ սկիզբը ծիսական կիրակիին, մեր Տիրոչ Ցարութեան օրը։ Հոգեհանգիստ կր կատարուի նաեւ քառասունքին ըստ Հին Կտակարանի՝ երբ ժողովուրդը 40 օրեր սգաց Մովսէսի մահը, ինչպէս նաևւ մահուան տարեդարձին կամ ուրիշ որեւէ առիթով որ ընտանիքը կը փափաքի հաւատքով ոգեկոչել հանգուցեալի մը յիշատակը։

Archen Aiurzian

